

ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բանալի բառեր – Հայոց եղեռն, Թուրքիայի 1919-1920 թթ. դատավճիռներ, Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդ, Դադրյան, Էնվեր, Ջեմալ, Նազիմ, Սուլեյման Դեմիրել, Հոլոքոստ

Վերջին երկու տարիների ընթացքում Հայոց եղեռնի դատապարտման, միջազգային ճանաչման հարցադրումներում նկատելիորեն ընդլայնվել են զուտ իրավական չափանիշներով գիտագործնական հետազոտությունների շրջանակները: Հիմնահարցերի ուսումնասիրության մեթոդաբանության համատեքստում այս բնույթի վերանայումները, թերևս, պայմանավորված են ինչպես Հայոց եղեռնի դատապարտման առնչությամբ միջազգային աստիճանների արձագանքներում ի հայտ եկած միանգամայն նոր երանգներով, այնպես էլ հայ և օտարերկրյա պատմաբանների հիբրավի նպատակասլաց ու ծանրակշիռ հետազոտությունների շնորհիվ:

Այն պահից, երբ Հայոց ցեղասպանության դատապարտման համատեքստում առանձին երկրներ (Շվեյցարիա, Ֆրանսիա, Սլովակիա, Իտալիա և այլն) փորձեցին խնդրին անդրադառնալ արդեն քրեական պատասխանատվության չափանիշներով, թուրքական իշխանությունները դիմեցին աննախադեպ քաղաքական ճնշումների, որի պատճառով ոչ բոլոր երկրներում ունեցանք իրավաչափ հաջողություն, իսկ Շվեյցարիայի պարագայում պետությունը պատասխանողի կարգավիճակով հարկադրված եղավ 2013 թ. հանդես գալու Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Ընդ որում, այս միջազգային դատական հեղինակավոր աստիճանը, բազմաթիվ մասնագետների կարծիքով, չկարողացավ հաղթահարել փորձությունը, տուրք տվեց քաղաքական շահարկումների, և արդյունքում նրա կայացրած դատական ակտը 2013 թ. դեկտեմբերի 17-ին բողոքարկվեց և վերանայման փուլում է:

Մի կողմից պատմաբանների բարեխիղճ գործունեության շնորհիվ կուտակվել է հսկայական նյութ, հրապարակվել են Հայոց ցեղասպանության փաստը անժխտելիորեն հավաստող բազմաթիվ պաշտոնական անառարկելի փաստաթղթեր, մյուս կողմից միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացում «պահանջարկ» ունեն բացառապես սահմանված կարգով իրավասու դատական աստիճանների կողմից ցեղասպանության փաստը հավաստող ապացույցները:

Կարծում ենք, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում դատական ակտերի վրա շեշտադրում չանելը, դրանք՝ որպես հիմնական փաստարկներ, շրջանառության մեջ չդնելը, որքան էլ որ դա ոչ իրավաչափ և անհեռանկար լինի, այնուամենայնիվ դեռևս պահպանում է իր կենսունակությունը և հանիրավի խոցելի դարձնում հիշյալ գործընթացի արդյունավետությունը: Խոսքը, առաջին հերթին, 1919-1921 թթ. թուրքական ազգային դատարանների կայացրած այն դատավճիռների մասին է, որոնցով «Իթթիհադ»-ը՝ երիտթուրքերի ղեկավար կուսակցությունը, թուրք բարձրաստիճան զինվորականները, պետական ու կուսակցական գործիչներն ու այլ պաշտոնյաներ դատապարտվել են էթնիկ հատկանիշով պայմանավորված զանգվածային կոտորածներ կազմակերպելու և իրականացնելու, ինչպես նաև նույն նպատակով բռնի տեղահանումների համար:

Նկատենք, որ հիշյալ դատական ակտերին, թերևս, առաջին անգամ պաշտոնապես արձագանք եղավ 2015 թ. հունվարի 25-ին Հանրապետության Նախագահի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրում՝ «համարելով նաև 1919-1921 թվականներին Օսմանյան ռազմական արտակարգ ատյանների կողմից «Իրավական և մարդկային օրենքների դեմ» այդ ծանր ոճրի ուղղությամբ կայացված դատավճիռները եղելության իրավական գնահատական»¹: Այսպիսով, հայրենական պաշտոնական քաղաքականությունը հետայսու որպես Հայոց ցեղասպանության դատապարտման իրավական հիմքերի ուղենիշ է համարելու նաև վերոհիշյալ դատավճիռները: Կարծում եմ, սա բովանդակային նոր լիցք կհաղորդի զարգացումներին:

Այս դատավճիռներին մենք դեռ կանդրադառնանք ստորև, սակայն նախ փորձենք պարզել, թե ինչու, ինչ նկատառումներով է թելադրված վերոհիշյալ դիրքորոշումը, մասնավորապես՝ ինչո՞ւ տարաբնույթ ու հավաստի բազմաթիվ պատմական փաստերի կողքին չեն հայտնվում նաև իրավական չափանիշներով առավել նշանակալից ու մեծարժեք դատավճիռները: Շատերը հակված են այն տեսակետին, թե այս հարցի հիմքում խարսխված է բացառապես հոգեբանական գործոն, ըստ որի՝ հենց Թուրքիայի ժխտողական քաղաքականության համատեքստում տևական ժամանակով ձևավորվել է համոզմունք, որ անիմաստ է կեղծիքը որպես քաղաքականության անդավաճան լծակ որդեգրած թուրքական կողմից սպասել արդարության, այդ թվում՝ արդարադատության որևէ դրսևորում²:

Վերոհիշյալ հոգեբանական գործոնի առնչությամբ մենք ևս մեծ հույսեր չենք փայփայում, սակայն չենք կարող չնկատել, որ դրան անհարկի ոչ

¹ Հռչակագրի տեքստը տե՛ս Հայաստանի Հանրապետության Նախագահի www.president.am պաշտոնական կայքում:

² Տե՛ս **MacDonald D. B.**, *Identity Politics in the Age of Genocide. The Holocaust and Historical Representation*, Routledge, 2008, p. 31-39:

համարժեք նշանակություն է վերապահվել: Չպետք է անտեսել նաև այնպիսի փաստարկները, ինչպիսիք են ոչ բավարար իրազեկվածությունը, նշված դատական ակտերի իրավական արժեքի մասին տարաբնույթ գնահատականները և վերջապես ինտերցիոն մտածելակերպը, որը հաճախ հանգեցնում է կարծրատիպերի ձևավորման: Պետք է նշել, որ թուրքական դատարանների կողմից զանգվածային բնաջնջումները դատապարտող դատավճիռների կայացումը բնավ թելադրված չի եղել արդարադատության մարմաջով. դրանք հիմնականում պայմանավորված են եղել այդ երկրի միջազգային ու ներազգային մի շարք այնպիսի ազդակներով (որոնց ևս կանդրադառնանք ստորև), որոնք պատմական տվյալ ժամանակաշրջանում կյանքի են կոչել այդ գործընթացները¹:

Այն, որ այդ գործոնները սոսկ պատմական տվյալ իրավիճակով են թելադրված և բնավ չեն բնութագրում թուրքական քաղաքականության էությունը, ապացուցվում է թեկուզ այն փաստով, որ 1923 թ. մարտի 31-ին, այսինքն՝ դատավարություններից ընդամենը երկու տարի անց, Թուրքիայում հայտարարվեց համաներում, որի արդյունքում ազատության մեջ հայտնվեցին բոլոր այն ոճրագործները, որոնք դատապարտվել էին Թուրքիայի զինվորական դատարանի և ընդհանուր իրավասության մյուս դատարանների կողմից²:

Ընդ որում, թուրքական դիավանագիտությունը ևս ամեն ինչ արել և անում է, որպեսզի հիշյալ դատական գործընթացները չհայտնվեն քաղաքական բանավեճերի տեսադաշտում, չդառնան քննարկման նյութ, հնարավորինս գաղտնի լինեն հանրության լայն շրջանակներին, ինչը տևական ժամանակ նրանց հաջողվել է³: Մակայն, երբ անցյալ դարի 60-ականներին դրանք անխուսափելիորեն դարձան լայն հրապարակային քննարկման առարկա, գործի դրվեցին դրանց իրավական հիմնավորվածությունը և հավաստիությունը կասկածի տակ դնելուն կոչված նոր «փաստարկներ»:

Նախապես նկատենք, որ բնավ հակված չենք նշված դատական ակտերը բնորոշել, որպես ոչ միայն միջազգային չափանիշներին, այլև ազգային (տվյալ պարագայում՝ թուրքական) իրավունքին լիովին համահունչ արդարադատության իրականացման նմուշներ: Ինչ խոսք, դրանք հեռու են այդպիսիք համարվելուց, սակայն հատկանշական է, որ թուրքական քաղաքակա-

¹ Տե՛ս **Барсегов Ю. Г.**, Геноцид армян – преступление по международному праву. – XX1 век – Согласие, М., 2000, с. 111-112:

² Տե՛ս **Dadrian V. N.**, Genocide as a problem of National and International Law: the Wold War I Armenian case, its contemporary legal ramifications, Yale Journal of International Law, vol. 14, N 2. (Summer 1989), p. 313-314:

³ Ընդ որում, Հայոց ցեղասպանության առնչությամբ թուրքական քաղաքականության առանցքում «պատմական իրադարձությունները» առավելապես պատմաբաններից բաղկացած հանձնաժողովներ ձևավորելու անհրաժեշտության գաղափարի հայտնվելը նպատակին է ծառայում:

նությունը կառուցված է անգամ այդ կարգի դատական ակտերում արձանագրված փաստերն ամբողջովին ժխտելու նկրտումների վրա: Պարզվում է, որ շուրջ 100 տարի անց թուրք գործիչներն ու իրենց «գիտնական» հորջորջողները կասկածի տակ են առնում իրենց իսկ երկրի դատական ատյանների դատավճիռները:

Ցեղասպանության յուրաքանչյուր փաստ արձանագրելու, ընդհանրապես որևէ արարք հանցագործություն որակելու համար անվերապահորեն անհրաժեշտ է մեղադրական դատական ակտ: Մա անվիճելի սկզբունք է, որն իր ամրագրումը ստացել է բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթերում և ճանաչվել ազգային իրավական համակարգերով: Ընդ որում, այս տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունեն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի վեցերորդ հոդվածով ամրագրված դրույթները, որոնք խնդիրը կարգավորման նյութ են դարձրել մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից¹:

Միջազգային իրավունքի փաստաթղթերը, անդրադառնալով այս խնդրին, հարցը քննարկման առարկա են դարձնում հիմնականում մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից. տվյալ դեպքում շեշտադրվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում հենց այս հանգամանքն է շեղել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացները, քանզի թյուրիմացաբար այն տեսակետն է գերիշխել, ըստ որի՝ արարքը հանցագործություն ճանաչելով՝ հրնթացս խախտվում է անմեղության կանխավարկածը:

Քանի դեռ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը սահմանափակվում էր սոսկ այս կամ այն երկրի օրենսդիր մարմնի կողմից որևէ իրավական եղանակով ճանաչելով կամ քաղաքական գնահատական հնչեցնելով, դրանց որևէ իրավական նշանակություն չէր տրվում, դրանք չէին դառնում իրավական հետևանք առաջացնող փաստաթղթեր, իսկ արձագանքը բացառապես սահմանափակվում էր քաղաքական համատեքստում: Առավելագույնը տվյալ դեպքում այն է, որ այս կամ այն կերպ դրանք նվազեցնում են Թուրքիայի միջազգային վարկը և անուղղակիորեն առաջացնում այդ երկրի կողմից Հայոց ցեղասպանության փաստն ընդունելու ոչ միանշանակ պարտավորություն: Ինչ խոսք, անգամ այս զարգացումները չէին կարող անտարբեր թողնել թուրքական կողմին, որը հետևողական ու միջոցների մեջ որևէ խտրություն չդնող գործելաոճով մշտապես ձգտել է ժխտել Հայոց ցեղասպանությունը:

Սակայն, երբ Հոլոքոստի առնչությամբ որոշ եվրոպական երկրների կողմից դա ժխտելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու գործընթացն իր արձագանքն ունեցավ նաև Հայոց ցեղասպանության համա-

¹ Տե՛ս **Оганесян В. А.**, Принципы уголовного правосудия в международном праве. Эволюция и особенности имплементации / Оганесян В. А., *NOTA BENE*, 2011, с. 85:

տեքստում, անմիջապես փոխվեց ոչ միայն քաղաքական բանավեճերի հարթակը, այլև բուն փաստարկների իրավական արժեքը: Պարզ դարձավ, որ «դասական եղանակներով» Հայոց ցեղասպանության ճանաչման, առավել ևս այն ժխտելու կամ դրա նշանակությունը մեղմելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու հեռանկարը խիստ խոցելի է:

Նման դեպքերում, ինչպես ասում են՝ չկա չարիք, առանց բարիքի. վերջապես հայրենական դիվանագիտությունը հարկադրված կլինի լրջորեն անդրադառնալու Հայոց ցեղասպանությունը նաև դատական համապատասխան ակտերով հիմնավորելու խնդրին և չի բավարարվի սոսկ պատմական փաստերի լուսաբանմամբ:

Կարծում ենք, Թուրքիային հաջողվել է ոչ միայն տևական ժամանակով խիստ կարևոր քննարկումներում տեսադաշտից հեռու պահել հիշյալ դատական գործընթացները, այլև պարտադրելու խնդրի հետազոտման ու քննարկման իր կանոնները, իր, այսպես կոչված, օրակարգը, որոնք մի կողմից բարենպաստ են թուրքական քաղաքականության տեսանկյունից, մյուս կողմից ձևավորում են խնդրի քննարկման այնպիսի մեթոդաբանություն, որ տանում է փակուղի, հնարավորություն չի տալիս արմատապես վերանայելու ձախողված կարծրատիպերը:

Սակայն վերջին շրջանի զարգացումները, այդ թվում՝ հայրենական պետական քաղաքականությունը, վկայում են այն մասին, որ շահեկանորեն արմատապես վերանայվել են թե՛ հարցադրումների շրջանակը և թե՛ դրանց հետազոտության կողմերը: Իհարկե, Թուրքիայի քարոզչությունը փորձում է բացառել այդ զարգացումները, քննարկումների ներկայանակում նոր հարցադրումները, սակայն դա ակնհայտ ձախողման է մատնված:

Նկատենք, որ Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը 2012 թ. փետրվարի 28-ի որոշմամբ գտել է, որ ցեղասպանությունները ժխտելու համար քրեական պատասխանատվության սահմանումը հակասահմանադրական ոտնձգություն է խոսքի և արտահայտվելու ազատության նկատմամբ: Այդ որոշումն ընդամենը վեց կետից բաղկացած երկուէջանոց փաստաթուղթ է, այն նման չէ սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկային, երբ նախապատվությունը տրվում է փաստերի ու հիմնավորումների հանգամանալից շարադրանքին: Դրա հինգ կետերը սոսկ գործի հանգամանքների նկարագրությունն են, և միայն վեցերորդ կետում, առանց համարժեք վերլուծության և հիմնավոր իրավական դիրքորոշումների, ներկայացված է խորհրդի վերոհիշյալ եզրահանգումը¹: Ընդ որում, որպես հիմք է ընդունվել այն, որ խորհրդարանի կողմից նորմատիվային նշանակության օրենքի ընդունումը ոչ իրավաչափորեն սահմանափակել է խոսքի և արտահայտվելու ազատությունը: Միաժամանակ, արձանագրվել է, որ որևէ արար-

¹ Տե՛ս <http://www.hayweb.ru/news/diaspora/1113-koordinacionnyy-sovet-armyanskih-organizaciy-francii-osudil-reshenie-konstitucionnogo-soveta.html>

քի ժխտում չէր կարող խորհրդարանի որոշմամբ ճանաչվել հանցագործություն, քանի դեռ բացակայում է այդ արարքը հանցագործություն որակելու համապատասխան դատավճիռ:

Խոսքի ազատության սահմանափակման առնչությամբ, մեր խորին համոզմամբ, սահմանադրական խորհուրդը դրսևորել է երկակի չափանիշ, քանզի բազմաթիվ այլ որոշումներով միանգամայն նույնաբնույթ հանգամանքների առկայության պայմաններում իրավաչափ է համարվել խոսքի ազատության սահմանափակումը:

Անդրադառնանք կոնկրետ արարքը ոչ թե օրենքով, այլ բացառապես օրենքով ստեղծված դատարանի կողմից կայացված դատական ակտով հանցագործություն որակելու խնդրին: Ներկայումս հատկապես Ֆրանսիայում սահմանադրական խորհրդի որոշմամբ՝ խորհրդարանի ընդունած՝ Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար քրեական պատասխանատվություն սահմանող օրենքը Սահմանադրությանը հակասող ճանաչելու առնչությամբ աննախադեպ արդիականություն է ձեռք բերել Հայոց ցեղասպանությունը դատական ակտով ճանաչելու հարցը: Մյուս կողմից, խնդրի հետազոտմամբ զբաղված գիտնականները (ոչ միայն հայրենական) պնդում են, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչված է նաև դատական ակտերով:

Դատելով Թուրքիայի հայաստյաց քաղաքականությունից՝ վերջինս հազիվ թե իր նախաձեռնությամբ փորձեր պատասխանատվության կանչել ցեղասպանության կազմակերպիչներին ու իրականացնողներին, այնուամենայնիվ անցյալ դարասկզբին կայացած դատական գործընթացները եղել են բացառություն: Չափազանց կարևոր է այն հարցի պատասխանը, թե ի՞նչ գործոններով է թելադրված այդպիսի դատական գործընթաց նախաձեռնելու միտումը: Հետազոտողներից շատերը պնդում են, որ դրանում, օրինակ, վճռորոշ դերակատարում են ունեցել Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած գերտերությունները:

Նշված հարցը նկատելի չարչրկվածներից է. այն անխուսափելիորեն և արդեն օրինաչափորեն դարձել է թուրքական քարոզչության հերթական կեղծիքների թիրախ: Ըստ թրքամետ սկզբնաղբյուրների՝ Մուղղոսի հաշտության համաձայնագրից հետո Թուրքիան իբր հարկադրաբար ձեռնամուխ է եղել հիշյալ դատավարություններին, սակայն զրկված է եղել ինքնուրույն դատավարություն իրականացնելու նվազագույն հնարավորությունից և գործել է բացառապես գերտերությունների թելադրանքով¹: Այսպիսով, մեկնարկ է ընդունվում այն գաղափարը, որ Թուրքիայի իշխանությունները դատավարություններ նախաձեռնելու իրական հիմքեր չեն ունեցել, այն պարտադրվել է արտաքին ուժերի կողմից և իրականացվել նրանց թելադրանքով: Ինչ խոսք, սա թուրքական գաղափարախոսության համար չափազանց գրավիչ մեկնաբանություն է, և որպեսզի այն առավել հավաստի թվա, հրնթացս

¹ Տե՛ս **Lewy G.**, Revisiting the Armenian Genocide, Middle East Quarterly, Fall 2005, p. 3-12:

շեշտվում է, որ դատավարությամբ հետազոտված բոլոր ապացույցները (հայերի, հույների, ասորիների, քրդերի և այլ ազգային փոքրամասնությունների բնաջնջման վերաբերյալ հրամանների, հեռագրերի, նամակների պաշտոնական բնագրերը, վկաների, այդ թվում՝ թուրք պաշտոնյաների ցուցմունքների արձանագրությունները, ռազմական գործողությունների սխեմաները և այլ գաղտնի փաստաթղթերը, որոնք կցված են եղել քրեական գործերին) հայերի կողմից միտումնավոր ոչնչացվել են:

Վերադառնանք գերտերությունների, այսպես կոչված, ճնշումներին: Մատչելի փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ նրանք հիմնականում պահանջել են դատավարություններ սկսել Թուրքիայի կողմից գերի վերցված իրենց զինվորների նկատմամբ կատարված ոճրագործությունների համար, իսկ ինչ վերաբերում է հայերի և այլ ազգային փոքրամասնությունների բնաջնջմանը, ապա այն ներկայացվել է իբրև լրացուցիչ, երկրորդական հարց: Ընդ որում, Մեծ Բրիտանիան սկզբնական շրջանում առաջ էր քաշում բացառապես բրիտանացի զինվորների նկատմամբ ոճրագործություններ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու հարցը և միայն հետագայում համաձայնվեց, որպեսզի գոնե դրանից հետո քննության նյութ դառնա նաև ցեղասպանության կազմակերպիչների հարցը:

Ակնհայտ է, որ հայերի զանգվածային բնաջնջման առնչությամբ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, ցավոք, բացառապես բավարարվել են հայտնի իրադարձությունները դատապարտող հռչակագրերով: Մասնավորապես, 1915 թ. մայիսի 24-ին երեք պետություններ՝ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, ընդունել են Թուրքիայի կողմից «մարդկության և քաղաքակրթության դեմ» ուղղված հանցագործությունները դատապարտող հռչակագիր: Սակայն, հարկ է նկատել, որ այդ հռչակագրերում նշված պետություններն այդ իրադարձություններն աներկբայորեն ճանաչել են որպես Թուրքիայի կողմից էթնիկական հատկանիշով պայմանավորված զանգվածային բնաջնջումներ:

Արդիականություն է ձեռք բերել այն հարցը, թե որքանով են հետևողական եղել գերտերությունները՝ հիշյալ դատավարությունն իրականացնելու հարցում: Հետևողականություն իրականում եղել է, սակայն այն ունեցել է բոլորովին այլ միտում: Նախ՝ մինչև դատավարությունն սկսելը, ավելին՝ մինչև մինչդատական վարույթ նախաձեռնելը, նույն այդ գերտերությունների անմիջական աջակցությամբ Թուրքիան անարգել լքել են բոլոր այն բարձրաստիճան պաշտոնյաները, որոնց նկատմամբ եղել է մահապատիժ սահմանելու հնարավոր «վտանգ»: Պատահական չէ, որ հենց գերմանական նավով հապճեպ փախուստի են դիմել Հայոց ցեղասպանության գաղափարախոսներն ու անմիջական կազմակերպիչները՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և Նազիմը: Դրանից հետո այս անձանց սիրահոժար իրենց հետ համագործակցելու տարաբնույթ առաջարկություններ են արել արդեն Խորհրդային

Ռուսաստանն ու մյուսները: Բնորոշ է այն, որ Էնվերը, գտնվելով հետախուզման մեջ և հեռակա դատապարտված լինելով մահապատժի, արդեն Խորհրդային Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարությունում զբաղեցնում է խիստ պատասխանատու պաշտոն: Այլ հարց է, որ այդ գործիչները հետագայում Խորհրդային Ռուսաստանի իշխանություններին ևս խաբում են և վստահությունը չարաշահելու միջոցով փորձում իրականացնել միայն իրենց հոգեհարազատ՝ պանթյուրքիզմի գաղափարները:

Ավելին, նշված պետությունների հատուկ ծառայությունները հոգացել են, որպեսզի վերջիններս հնարավորինս պաշտպանված լինեն, անգամ նրանց ապահովել են իրավասու պետական մարմինների տված կեղծ անձնագրերով ու անուններով: Օրինակ, Էնվերը Գերմանիայում հանդես է եկել «Ալի-Բեյ» կեղծանվամբ: Այն է՝ գերտերությունների կողմից ի՞նչ թելադրանքի մասին կարող է խոսք լինել, երբ հիմնական ոճրագործներին պատժից զերծ պահելու և համագործակցելու նախաձեռնությունը հենց նրանց է պատկանել: Ավելին, թուրքական բանակում բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ ազգությամբ գերմանացիներ կամ բրիտանացիներ էին: Այդպիսի իրավիճակում առավել իրավաչափ կլինի խոսել ոչ այնքան միջազգային գերտերությունների մտահոգության, որքան այդպիսի պատրանք ստեղծելու մասին:

Հանրահայտ է, որ հետախուզման մեջ գտնվող և մահապատժի դատապարտված բոլոր թուրք պաշտոնյաները հետագայում, այնուամենայնիվ, հայտնաբերվել ու սպանվել են, սակայն այդ հարցը որևէ առնչություն չունի «թուրքական արդարադատության» հետ:

Վերադառնանք հիմնական խնդրին. ի՞նչ նկատառումներով ու չափանիշներով են որոշ հետազոտողների կողմից Թուրքիայի ռազմական տրիբունալի 1919-1921 թթ. իրականացրած դատավարությունները գնահատվում իբրև մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին հակասող: Այդ գնահատականի թերևս ամենահետևողական հեղինակը ամերիկացի պատմաբան Գյունտեր Լյուին է, սակայն վերջինիս աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք պարզապես թուրքական պաշտոնական գաղափարախոսության և դրա «տեսաբանների» բառացի կրկնություններն են, չունեն որևէ փաստական հիմք և համոզիչ չեն նաև հեղինակի մասնագիտական ունակությունների տեսանկյունից: Վերջին հանգամանքի վրա իր ուշադրությունն է բևեռել նաև ամերիկահայ նշանավոր պատմաբան, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Վահագն Դադրյանը: Մասնավորապես, վերջինս ստույգ փաստերով ոչ միայն հիմնավորել է Գ. Լյուիի դիրքորոշումների սնանկությունն ու միտվածությունը, այլև բացահայտել է, որ նա չի տիրապետում առնվազն թուրքերենին, հատկապես օսմաներենին, թեպետ հղումներ է կատարել այդ լեզվով աշխատությունների: Հիմնավորվել է, որ Գ. Լյուին ոչ միայն չի տիրապետում այդ լեզվին, այլև միտումնավոր խեղաթյու-

րում է անգամ թուրքական սկզբնաղբյուրները՝ փորձելով ավելի համոզիչ դարձնել իր սին գաղափարները¹: Ընդ որում, Վ. Դադրյանի գնահատականների առնչությամբ միանգամայն իրավացիորեն իրենց համաձայնությունն են հայտնել միջազգային քաղաքագիտության բազմաթիվ ներկայացուցիչներ², հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նա ծնվել և մեծացել է Օսմանյան Թուրքիայում, այնուհետև տևական ժամանակ դասավանդել աշխարհի լավագույն ու բարձր վարկանիշ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Այդ ակնհայտ ուղղորդված հեղինակին «մտահոգել է» այն, որ նախաքննության ընթացքում կասկածյալները զրկված են եղել պաշտպանների օգնությունից: Մինչդեռ դատավարության արձանագրությունները վկայում են, որ կասկածյալներն ամեն օր ազատ շփումներ են ունեցել միմյանց հետ (հատկապես զբոսանքի ժամերին) և ունեցել են պաշտպանական միասնական մարտավարություն մշակելու լավագույն հնարավորություն: Բացի այդ, նրանք պարբերաբար օգտվել են կարճատև արձակուրդներից՝ լքել մեկուսարանները, ինչը նրանց լայն հնարավորություններ է ընձեռել տևական ժամանակ ազատ շփվելու իրենց պաշտպանների հետ:

Հղելով Ստամբուլում Մեծ Բրիտանիայի գերագույն հանձնակատար Դը Ռոբեկայի խոսքերը՝ Գ. Լյուին փորձել է պնդել, որ անգամ «պատվիրատու» պետություններն են դժգոհել դատավարությունից: Իրականում վերջիններս դժգոհություններ հայտնել են, սակայն նա հարկ չի համարել հստակեցնել, որ դա պայմանավորված է եղել կասկածյալների նկատմամբ թուրքական իշխանությունների բացահայտ հովանավորչությամբ: Օրինակ, Թուրքիային առաջարկվել է հաշվի առնել դատավարության միջազգային բնույթը և դատարանի կազմում ընդգրկել այլ պետությունների ներկայացուցիչների, սակայն այդ և նմանաբնույթ բոլոր այլ առաջարկությունները կտրականապես մերժվել են, ինչն իրավամբ դժգոհություն է հարուցել: Այսպիսով, Գ. Լյուին փորձել է պարզունակ խորամանկության դիմել և որպես իր պնդումների հիմնավորում հատվածաբար հղումներ է կատարել այլ իբրև «հավաստի» սկզբնաղբյուրների:

Ի դեպ, տեսնելով ակնհայտ կողմնակալության դրսևորումները, անգլիական հրամանատարությունը երիտթուրքերի առաջնորդների և նախարարների գործով 1919 թ. ապրիլի 27-ին սկսված դատավարությամբ անցնող թվով 77 կալանավորների ստիպված տեղափոխել է Մալթա, որտեղ դատա-

¹ Հիշյալ հարցադրումներն առավել հանգամանորեն լուսաբանված են Վ. Դադրյանի հետևյալ աշխատություններում. **Dadrian V. N.**, *The Turkish Military Tribunal's Prosecution of the Authors of the Armenian Genocide: Four Major Court-Martial Series, Holocaust and Genocide*, 1977, vol. 11, p. 28-59; *idem*: *Armenian Genocide. Court-martial of perpetrators*, *Encyclopedia of genocide*, Santa Barbara, California: ABC-CLIO, 1999, – 718 p.:

² Տե՛ս **MacDonald D. B.**, նշվ. աշխ.:

վարությունը շարունակվել է մինչև 1919 թ. հունիսի 26-ը (այս առանցքային գործով *մեղադրական* դատավճիռն արձակվել է 1919 թ. հուլիսի 5-ին):

Քննարկվող պարագայում նույն դատողություններն այլազգի հեղինակների շուրթերից հնչեցնելը պարզապես հետապնդում է դրանց արտաքինապես առավել հավաստիության պատրանք հաղորդելու նպատակ: Այս կտրվածքով այնքան էլ համամիտ չեմ այն հեղինակների հետ, որոնք գտնում են, թե իբր հրեա հետազոտողները կանխակալ դիրքորոշում ունեն և ամեն գնով փորձում են Հոլոքոստի նշանակությունը չնսեմացնել Հայոց ցեղասպանության ճանաչման փաստով¹: Մյուս կողմից՝ այդ դատավարություններում, հասկանալի պատճառներով, դույզն-իսկ որևէ ողջամիտ միջոց չի ձեռնարկվել տուժողների (բացառությամբ՝ Անտանտի պետություններից գերեվարված զինվորների) շահերի պաշտպանության համար: Բնորոշ է այն, որ դատավարությանը մասնակցած սակավաթիվ հայ փաստաբանների բոլոր միջնորդությունները մերժվել են²:

Բոլոր այն անձինք, ովքեր այս կամ այն պատճառով չեն հասցրել փախուստի դիմել, ստացել են զանգվածային բնաջնջումների համար ակնհայտ անհամաչափ, խորհրդանշական պատիժներ: Խիստ սահմանափակ դեպքերում է սահմանվել 10-15 տարվա ազատազրկում: Այսպես, օրինակ, երիտթուրքերի կուսակցության Խարբերդի տեղական կոմիտեի քարտուղար Ռեսնելի Նազիմը մի քանի տասնյակ մարդկանց սպանությունը, գույքի զանգվածային հափշտակությունը և բռնաբարությունները կազմակերպելու համար դատապարտվել է 15 տարվա տաժանակիր աշխատանքի: Ընդ որում, մեր կողմից դեռևս ոչ բավարար ծավալով կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ պատժվածները հիմնականում «չեն հասցրել» կրել իրենց պատիժները՝ ազատ արձակվելով անգամ մինչև 1923 թ. համաճեման ակտը: Իսկ եթե հավելենք, որ դատավճիռներ արձակած բոլոր դատավորներն արդեն 1930-1931 թթ. գնդակահարվել են, պատկերն ամբողջական կդառնա:

Այնուամենայնիվ, կան դատավճիռներ, սակայն չեն պահպանվել դրանց արժանահավատությունը հավաստող արխիվային փաստաթղթերը: Ընդ որում, թուրքական կողմն ու դրանց համակիրները պնդում են, որ փաստաթղթերի ոչնչացման հարցում, ինչպես նշվեց, մեղավոր են հենց հայերը: Որևէ լուրջ հետազոտողի մտքով անգամ չի անցնի ենթադրել, որ այդ արխիվային փաստաթղթերը ոչնչացրել են հայերը. ի դեպ, դա այնքան անհեթեթ դատողություն է, որին հարկ չկա նույնիսկ անդրադառնալու: Ի վերջո, քրեական գործերում առկա պետական խիստ պահպանության ներքո գտնվող փաստաթղթերը մեծագույն ցանկության դեպքում չէին կարող հափշտակվել ու

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 145-151:

² Տե՛ս **Akçam T.**, From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide, London, New York, 2004, p. 270:

ոչնչացվել մասնավոր անձանց կողմից, մասնավանդ ցեղասպանությունից հետո Թուրքիայում առկա պայմաններում:

Ինչ վերաբերում է արխիվային փաստաթղթերին, ապա ներկայացնենք որոշ նկատառումներ: Նախ դրանց հիմնական ու առավել առանցքային նշանակություն ունեցող հատվածի կորուստը (ես սա պայմանականորեն եմ նշում, որովհետև դեռևս վստահ չեմ, որ դրանք գոյություն չունեն) պետք է որ սթափեցնեն մեր այն «ազգային գործիչներին», որոնք մի պահ հրապուրվել ու պատմական փաստաթղթերը համատեղ ուսումնասիրելու համար պատմաբաններից կազմված հանձնաժողովներ ստեղծելու քայլեր էին փորձում ձեռնարկել: Մյուս կողմից՝ դատավճիռների հիմքում դրված փաստաթղթերի գոյության փաստը ևս չի կարելի ժխտել. վերջին հաշվով, դատավարության մասնակիցները հանգամանորեն հետազոտել են կոնկրետ փաստաթղթեր, ինչի առնչությամբ կազմվել են արձանագրություններ, իսկ հետագայում դրանց բացակայությունը չի կարող որևէ կերպ խոցելի դարձնել բուն դատավճիռների իրավաչափությունը: Ի՞նչ է ստացվում. թուրքական կողմը խայծ է նետում՝ հիմքում ունենալով իբր թե դատարանների կողմից հետազոտված պատմական փաստաթղթերի կորուստը, մասնավորապես հայերի կողմից իբր թե դրանց հափշտակությունն ու ոչնչացումը: Մենք արդեն անդրադարձանք այդ վարկածի սնանկությանը, սակայն առավել անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այն ոչ միայն չպետք է քննարկման հատուկ նյութ լինի՝ իր ակնհայտ անհեթեթություն լինելու պատճառով, այլև գլխավորապես այն պատճառով, որ որևէ իրավական նշանակություն ու արժեք չունի: Վերջին հաշվով, խոսքը դատական ատյաններում սահմանված կարգով հետազոտված ապացույցների մասին է, որոնց գերակշիռ մասը, այդ թվում դատավարությունների արձանագրությունները հանգամանորեն արտացոլվել են թուրքական մամուլում: Իսկ եթե դրանք հետագայում կորսվել են, ապա դա զուտ տեխնիկական բնույթ կրող հարց է: Կա՞նք դրանք, թե՞ ոչ. այս հարցի պատասխանը որևէ աղերս չունի կայացված և սահմանված կարգով երբևէ չբեկանված դատական ակտերի իրավաչափության հետ:

Մեկ կարևոր հարցադրում ևս. եթե թուրքական կողմը արդեն երկու տարի անց եկել է այն համոզման, որ դատավարություններում քննարկման նյութ դարձած փաստաթղթերի պաշտոնական բնօրինակները, վկաների ու կասկածյալների ցուցմունքների արձանագրությունները և այլ ապացույցները իբր բավարար չափով հավատ չեն ներշնչում, ապա կարող էր անդրադառնալ կայացած դատական ակտերին և նախաձեռնել դրանց բեկանման գործընթաց, մինչդեռ, ինչպես արդեն նկատեցինք, 1923 թ. ընդունվել է համաներում հայտարարելու մասին օրենք, որով ոչ միայն չի հերքվել դատական ակտերով արձանագրված փաստերը, այլև, հաշվի առնելով «միջազգային բարենպաստ իրավիճակը», հապճեպ նախաձեռնել են պատժված անձանց սուկ պատիժը կրելուց ազատելու գործընթաց: Հավելենք նաև, որ մա-

հապատժի դատապարտված բոլոր անձինք, որոնք հետագայում հերոսացվել են անգամ հանրակրթական դասագրքերի կտրվածքով և ներկայացվում են որպես Թուրքիայի ազատության և անկախության համար զոհված նահատակներ, դատական որևէ ակտով չեն արդարացվել¹:

Ի դեպ, փաստաթղթերի շրջանակը չի սահմանափակվում միայն դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով: Իհարկե տրամաբանական կլինեք, որ բոլոր վերաբերելի ու թույլատրելի ապացույցները պահանջվեին ու հետազոտվեին 1919-1921 թթ. դատավարությունների ընթացքում, սակայն բարեբախտաբար դրանց մի հատվածը ոչ միայն չի դարձել դատաքննության առարկա, այլև հավանաբար հենց այդ պատճառով, պահպանվել է: Բայց այս հարցն առայժմ առկախենք: Ուղղակի նկատենք, որ ապացույցների ոչ լիարժեք ուսումնասիրությունը ևս վկայում է դատական գործընթացներում մեղադրյալների հովանավորչության և դեպքերն ակնհայտորեն աղավաղելու փաստերի մասին:

Վերջին քաղաքական զարգացումները մեկ անգամ ևս հաստատում են, որ թուրքական կողմը հիշյալ դատավճիռներին վերաբերվում է այնպես, ինչպես Ալին կրտսերը՝ Ռամիլ Սաֆարովի նկատմամբ Հունգարիայի դատավճռի հետ. միանշանակ հերոսացվել ու շարունակում են հերոսացվել իրենց ազգային դատական ատյանների կողմից մահապատժի դատապարտված անձինք՝ հիմքում ունենալով այնպիսի լկտի ու սնանկ պատճառաբանություններ, որպիսիք մեր օրերում պաշտպանվում են իրենց անաչառ հետազոտող հոչակած լյուիների, պրոխանովների, գեյդար ջեմալների կողմից: Խորհրդային իշխանության փլուզումից հետո Էնվերի աճյունը 1996 թ. փոխադրվել է Թուրքիա՝ նախագահ Սուլեյման Դեմիրելիի խնդրանքով: Այդ ոճրագործների անուններով Թուրքիայում կարելի է հանդիպել բազմաթիվ բնակավայրերի, ուսումնական հաստատությունների և այլն: Թուրքական կողմը պարզապես ձգտում է անտեսել իր ազգային դատական ատյանների կողմից շուրջ 100 տարի առաջ կայացված դատական ակտերը:

Ինչ վերաբերում է արտասահմանյան երկրների խորհրդարաններին, ապա, ցավոք, այդ հարցում դեռևս չի ձևավորվել դատական ակտերով ղեկավարվելու անհրաժեշտ փորձ ու պրակտիկա՝ սույն հոդվածի սկզբնամասում բերված պատճառաբանություններով հանդերձ: Անգամ Հայոց ցեղասպանությունը ճանաչած բազմաթիվ պետություններ հիմնվել են միայն պատմական փաստերի վրա, մինչդեռ իրավական տեսանկյունից արժեք առաջին հերթին հիմքում դնել դատական ակտերը:

Կարևոր է նաև այն հարցադրումը, թե ի՞նչ չափով և ի՞նչ իրավական եզրույթներով են նշված դատական ակտերն անդրադարձել Հայոց ցեղասպանության փաստին, ինչպե՞ս են «բացատրել» զանգվածային սպանությունների պատճառները և այլն:

¹ Տե՛ս Բարսեղով Կ. Գ., նշվ. աշխ., էջ 89:

Եթե անցյալ դարի սկզբներին միջազգային իրավական փաստաթղթերով ցեղասպանությունը ճանաչված լիներ որպես մարդկության դեմ ուղղված ծանր հանցագործություն՝ դրանից բխող բոլոր քաղաքական-իրավական հետևանքներով հանդերձ, ապա Թուրքիան ոչ մի պայմանով այդպիսի «սխալ» չէր գործի և չէր նախաձեռնի հայտնի դատավարությունները: Մյուս կողմից, դրան նպաստել է Թուրքիայի ներքաղաքական բարդ իրավիճակը. մասնավորապես նոր ձևավորված կառավարությունը փորձել է ավելի ամրապնդել իր դիրքերը՝ միաժամանակ արտաքին աշխարհում անհրաժեշտ հեղինակության պատրանք և միջազգային հանրությունում հնարավորինս արագ ինտեգրվելու հիմքեր ստեղծել:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում իշխանության եկած նոր քաղաքական ուժերը փորձում էին ոչ թե պարզապես ամեն գնով ընդգծել նախորդ իշխանությունների հանցավոր բնույթը, այլ տեսանելի դարձնել այն, որ նրանց իրականացրած անհեռատես քաղաքականությունը շահեկան չի եղել հենց Թուրքիայի համար: Խնդիրը միայն զանգվածային բնաջնջումները չեն, այլև այն, որ օսմանյան իշխանությունները, տարվելով ցեղասպանության անհեռանկար գործով, հիմնական ուժերը ուղղել են բացառապես այդ ոճրագործությունների իրականացման վրա, ինչի արդյունքում կրել են խայտառակ պարտություն՝ դրանից բխող բազմաթիվ հետևանքներով. Օսմանյան Թուրքիայի տարածքների էական կորուստ, նյութական ու բնակչության ոչնչացում և այլն:

Կարևոր է ընդգծել, որ դատավճիռներում արտացոլված իրավական գնահատականները համապատասխանում են ցեղասպանության հանցակազմին, սակայն այդ եզրույթը հասկանալի պատճառներով չի օգտագործվել: Այսպես, արդեն 1919 թ. մայիսի 3-ին գլխավոր դատախազը դատարան է ներկայացրել փաստեր, որոնք վկայել են այն մասին, որ հայ բնակչության զանգվածային սպանությունները հիմնականում իրականացվել են խիստ կազմակերպված: Ավելին, դատարանում միանշանակ հերքվել է պաշտպանական կողմի այն դիրքորոշումը, թե իբր հայ բնակչության, այսպես կոչված, վերաբնակեցումները բխել են ռազմական գործողությունների անհրաժեշտությունից: Ապացուցված է համարվել այն, որ դրանք եղել են բռնի տեղահանություններ և ազգությամբ հայ մարդկանց ոչնչացման հատուկ կազմակերպված միջոց, իսկ եղանակն ինքնին դիտվել է մի կողմից որպես հնարավոր դիմադրությունը բացառելու, մյուս կողմից՝ միջազգային հանրությանը շփոթության մեջ գցելու «լավագույն» հնարք: Նկատենք, որ այս գնահատականների հիմքում դրված են թուրք պաշտոնյաների խոստովանական ցուցմունքները:

Ընդ որում, բացառապես էթնիկական հատկանիշով զանգվածային սպանությունների իրական ծրագրերը թաքցնելու նպատակով, ըստ վերը նշված դատական ակտերի, ինչպես նաև մեղադրական դատավճիռների, պարբե-

րաբար տրվել են գրավոր ու բանավոր «գաղտնի» հրահանգներ: Բնականաբար, բոլոր գրավոր փաստաթղթերը ենթակա են եղել ոչնչացման, սակայն դրանց մի մասը պահպանվել է ու հետագայում ուսումնասիրվել դատարանում:

Ամփոփելով նշված դատավճիռներում արտացոլված իրավական գնահատականները կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական եզրահանգումները՝

ա) էթնիկ հատկանիշով պայմանավորված՝ հայազգի անձանց զանգվածային սպանություններն ու բռնի տեղահանությունները կազմակերպվել և իրականացվել են իրավասու իշխանությունների կողմից, դրանք չեն եղել սոսկ առանձին կուսակցության կամ պաշտոնյաների անհատական հատվածական նախաձեռնություն,

բ) զանգվածային սպանություններն ու բռնի տեղահանություններն իրականացվել են «գաղտնագրված» հրամանների, հրահանգների, ծրագրերի ու բանավոր կարգադրությունների հիման վրա, որպեսզի չբացահայտվեն դրանց իրական նպատակը և ուղղվածությունը,

գ) նշված հանցագործության կատարմամբ երիտթուրքերը փորձել են մեկընդմիջտ լուծել «Հայկական հարցը», որը վերջիններիս գնահատմամբ մեծ սպառնալիք է ներկայացրել իրենց պետական անվտանգության համար,

դ) բռնի տեղահանությունները, որոնց հետևանքով մեծաքանակ անձինք մատնվել են սովամահության և այլ անմարդկային տանջանքների ու տառապանքների, ոչ մի առնչություն չեն ունեցել ռազմական անհրաժեշտության հետ (ի դեպ, ռազմական անհրաժեշտության վարկածը ներկայումս բավականին հաճախ են թմբկահարում թուրքական քարոզիչները), ընդ որում՝ տեղահանվել են անգամ այնպիսի բնակավայրերից, որոնք շատ հեռու են ռազմական թատերաբեմերի հետ, և որոնց բնակչությունը դրսևորել է ակնհայտ չեզոք վարքագիծ,

ե) կատարված հանցագործությունները միջազգային հանցագործություններ են և համընկնում են ոչ միայն, այսպես կոչված, իսլամի «պատվիրանների», այլև «մարդկության ու քաղաքակրթության» դեմ ուղղված հանցագործության հատկանիշների հետ և այլն:

Այսպիսով, բազմաթիվ երկրների խորհրդարաններ, իսկ Ֆրանսիայի պարագայում՝ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինը՝ Սահմանադրական խորհուրդը, իրավաչափ չեն համարում օրենսդիր մարմնի կողմից Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար քրեական պատասխանատվություն սահմանելը՝ պատճառաբանելով, որ այդպիսի քաղաքական որոշման հիմքում պետք է լինի համապատասխան դատական ակտ: Ավելին, ինչպես արդեն նկատեցինք, թուրքական կողմն արել է ամեն ինչ, որպեսզի վերը նշված դատավճիռները լայն քննարկման նյութ չդառնան, պարզապես չհայտնվեն տեսադաշտում՝ փորձելով միջազգային հանրության

ուշադրությունից հեռու պահել այն իրողությունը, որ հենց իր ազգային դատական ատյաններն են անցյալ դարասկզբին դատապարտել հայերի ոճրագործությունը: Եվ բավական է, որ որևէ հետազոտող փորձի այդ թեման արդիականացնել, անմիջապես գործի է դրվում Գ. Լյուիի նման հերքողներին կանաչ ճանապարհ հարթելու մեթոդաբանությունը:

Սակայն եթե զուտ գիտական չափանիշներով հիշյալ դատավճիռները դեռ կարող են հետազոտման նյութ լինել, ապա նույնը չի կարելի ասել իշխանության այս կամ այն ճյուղը ներկայացնող մարմնի գործունեության դեպքում: Ցավոք, նշված զգուշավորությունը մեծ մասամբ պայմանավորված է արտաքին քաղաքականության գործունեությամբ, իսկ մասամբ՝ ոչ բավարար իրազեկվածությամբ, ինչին արդեն անդրադարձանք: Վերջին հաշվով, Հայոց ցեղասպանության փաստն արձանագրվել է նաև Ռուանդայի ցեղասպանության գործով միջազգային դատարանի 2012 թ. դատավճռով (այս գործով դատարանը կայացրել է մի շարք դատավճիռներ), մասնավորապես այս դատական ակտը, անդրադառնալով ցեղասպանության, այդ թվում՝ Ռուանդայում արձանագրված նույնաբնույթ դեպքերի պատճառներին, ևս փաստել է, որ միջազգային հանրությունը համարժեք հետևություններ չի արել Հայոց ցեղասպանության փաստից, ինչը նպաստել է համանման երևույթների տարածմանը:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հիմնախնդրի և այդ կապակցությամբ խոսքի ու արտահայտվելու ազատության իբր թե անհիմն սահմանափակման հարցադրումներին սպառիչ պատասխաններ տալու նկատառումով նպատակահարմար ենք համարում որպես ելակետ ընդունել հետևյալ եզրահանգումները՝

ա) Հայոց ցեղասպանությունը, փաստորեն, հիմնավորվել ու ճանաչվել է թուրքական դատական ատյանների կողմից 1919-1921 թթ. իրականացված դատավարությունների արդյունքով կայացված դատավճիռներով: Վերջիններս օրինական ուժի մեջ են մտել և երբևէ չեն բեկանվել,

բ) Հայոց ցեղասպանության իրավական գնահատականը տրված է նաև Ռուանդայի ցեղասպանության գործով միջազգային դատարանի 2012 թ. դատավճռով,

գ) իրավական որևէ արժեք չունի այն փաստարկը, որ իբր դատաքննության փուլում հետազոտված բոլոր ապացույցները հետագայում հափշտակվել ու ոչնչացվել են հայերի կողմից, քանզի դրանք արդեն իսկ հետազոտվել և իրավական գնահատման նյութ են դարձել իրավասու դատական ատյանների կողմից,

դ) դատական ակտերով Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը հարկ է դնել ցեղասպանության միջազգային ճանաչման հայրենական դիվանագիտության հիմքում,

ե) նպատակահարմար է նախաձեռնել դատական ակտերից բխող թուրքիայի պետության պատասխանատվության հարցը՝ նախապես հանգամանորեն մշակելով բոլոր հնարավոր տարբերակներն ու իրավական հետևանքները: Վերջին եզրահանգման առնչությամբ, հաշվի առնելով Երևանի պետական համալսարանի գիտական ներուժը, առաջարկում ենք նախաձեռնել գիտահետազոտական կենտրոն, որը կոչված կլինի սեղմ ժամկետում համակողմանիորեն հետազոտելու Հայոց ցեղասպանության իրավական հիմքերին և պատասխանատվության նախապայմաններին առնչվող հարցադրումները և հանրության դատին հանձնելու հիշյալ ոլորտում պետական քաղաքականության ամբողջական հայեցակարգ:

Ամփոփելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման իրավական կողմերը, նպատակահարմար ենք գտնում, որ այդ առնչությամբ նախորդ դարասկզբի դատավարությունները լայն շրջանառության մեջ դնելու և հայրենական դիվանագիտության համար որպես կարևոր խաղաքարտ օգտագործելու անհրաժեշտությունն ունի նաև գուտ գործնական նշանակություն՝ անհատ քաղաքացիների տարրական գույքային իրավունքները պաշտպանելու տեսանկյունից: Խնդիրն այն է, որ միջազգային ապահովագրական ընկերությունները, որոնք շուրջ հինգ-վեց տարի առաջ նախաձեռնել էին Թուրքիայում Հայոց ցեղասպանության ընթացքում գոհված, ինչպես նաև հարկադրաբար գաղթած ազգությամբ հայ անձանց ապահովագրական վճարները նրանց ժառանգներին հատկացնելու գործընթացը, ակնհայտ անհիմն պատճառաբանություններով սոսկ թուրքական լոբիինգի ազդեցությամբ կտրուկ դադարեցրել են վճարումները: Ընդ որում, ԱՄՆ-ում «Աքսա» ապահովագրական ընկերության կողմից վճարումները դադարեցվել են այդ երկրի դատական ատյանների անհիմն միջամտությամբ: Այսինքն, կարող ենք արձանագրել, որ անգամ դատական ատյաններում է փորձ արվում անտեսել մեկ այլ երկրի դատական ատյանի կողմից կայացած և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը:

Геворг Даниелян – *Правовые основы осуждения Геноцида армян*

В статье рассматриваются вопросы правовой значимости приговоров судов Турции 1919-1921 гг. относительно событий Геноцида армян, их правомерности, правовой значимости с точки зрения осуждения Геноцида армян и другие подобные вопросы. Автор обосновывает мнение, согласно которому отраженные в данных приговорах обвинения безоговорочно свидетельствуют о том, что в годы Первой мировой войны Османская империя осуществляла уничтожение конкретных наций по исключительно этническим мотивам. В указанных судебных актах не употребляется термин «геноцид», однако это обусловлено не целью отрицания этого факта, а той простой причиной, что данный термин пока не находился в официальном применении и никоим образом не был отражен в международно-правовых документах.

Правовое значение приговоров Турции заключается в том, что в них в содержательном смысле вполне адекватно раскрыт факт Геноцида армян, утверждено прямое учас-

тие властей данного государства в этом и осуществление ими четко запрограммированных действий. В статье также раскрываются причины национального и международного значения, которые предопределили инициирование судебных процессов и осуждение некоторых должностных лиц к символическим наказаниям. Представлен также тезис, согласно которому действующие власти Турции и международное сообщество обязаны уважать вступившие в законную силу приговоры, а их официальные действия должны вытекать из них.

Gevorg Danielyan – *The Legal Basis for Condemning the Armenian Genocide*

The article considers the issues of legal significance of the judgments of Turkey of 1919-1921 concerning the events of the Armenian Genocide, their legitimacy, the legal relevance in the sense of condemnation of the Armenian Genocide and such other issues. The author substantiates that the accusations reflected in the mentioned judgments unequivocally witness that during the First World War the Ottoman Empire carried out the destruction of specific nations on exclusively ethnic grounds. The term “genocide” is not used in these judicial acts. Nevertheless, this is not due to the purpose of denying this fact, but due to the simple reason that the given term was not yet in the official application and was reflected in international documents in no way.

The legal significance of the judgments of Turkey is in the circumstance that they quite adequately disclose the fact of the Armenian Genocide, approve the direct involvement of the authorities of the mentioned state in the exercise of this and fulfilment of clearly programmed actions.

The article also reveals the reasons of national and international importance that determined the initiation of trials and sentencing some officials to symbolic punishments.

A thesis is presented in the final part, according to which the acting Turkish authorities and the international community have an obligation to respect judgments, which have entered into force, and their official actions must flow from them.